

**ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՐԿԱՅԻ ԹԵՍԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ**

Տարբերակ 1	Ճիշտ պատասխան	
1	հատել-կենտրոնացած ուշադրությամբ՝ անքթիթ նայել: հատել-կտրել, խաչաձևել հրավեր-հրավիրել, հրավեր ուղարկել հասկացություն -ըմբռնում, գաղափար, պատկերացում	հատնել-բարձրանալ, վեր ելնել, վերակենդանանալ հատնել-սպառվել, վերջանալ//թուլանալ,նվաղել, մարել հրավերք-հրավիրյալների համար կազմակերպված հացկերույթ, խնջույք հասկացողություն-հասկանալու՝ ըմբռնելու կարողություն
2	ստատուս -կարգավիճակ ֆիլիալ-մասնաճյուղ կորպուս -մասնաշենք մենեջմենտ-կառավարում	նոստալգիա-կարոտախտ ռոտացիա-փոխատեղում//փոփոխում սիտուացիա-իրադրություն, իրավիճակ բրասլետ-ապարանջան, թևնոց
3	1.մթնեցրին, 2.խոնավացնող, 3.կուրացրեց, 4.փախչել	
4	1.ներմուծվել է, 2.ներկայացրի, 3.խաբվել ենք, 4.Մի՛ մոռանա	
5	1.չէր շարժվում, 2.որոշումներ պիտի կայացվեն, 3.արտահայտվել, 4.հորիցդ, 6.Մարդուց	
6	1.Լավ հիշում եմ՝ դարբին Գևորգի՝ Արամի քեռու մուրճի տակից նոր դուրս եկած սայլանիվների՝ երկաթից պատրաստված օղերից մեկը հին էր, մյուսը՝ կարկատված, ճաքճքված: 2. Աղմուկից սարսափած ձիավորը փախչում է լեռները, ինչպես կփախչի պարտվածը դեպի փրկության բերդը: 3. Շատ խանութների առաջ՝ հենց հրապարակում, դարսված են ապրանքի հակերը, որովհետև խանութները լիքն էին, և լիքն էին պահեստները: 4. Արձանի գլուխը ջարդել են բարբարոսները, և մնացել է միայն պարանոցը, որը, այնուամենայնիվ, վկայում է, թե ինչքան գեղեցիկ էր այն գլուխը: 5. «Անու՛ շ արեք, Աբիսողո՛ մ աղա», - մտքում ասաց Մանուկ աղան:	
7	1	
8	4	
9	3	
10	4	
11	2	

**ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՐԿԱՅԻ ԹԵՍԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ**

<b>Տարբերակ 2</b>	<b>Ճիշտ պատասխան</b>	
<b>1</b>	պաշտպանել- անվտանգություն ապահովել, հսկել, վնասակար գործողություններից զերծ պահել վերաբերել- առնչություն ունենալ ծրագրել- ծրագիր կազմել, մտադրվել, նախասեսել փաստ- իրողություն, իրական դեպք՝ եղելություն, իսկություն	պահպանել-պահել, խնամքով պահել վերաբերվել-վերաբերմունք ունենալ, վարվել ծրագրավորել-որևէ ծրագիր կազմել համակարգչի համար՝ նրա մեջ ներդնելու նպատակով փաստարկ-հիմնավորում, պատճառաբանություն
<b>2</b>	ռեյտինգ - վարկանիշ ինաուգուրացիա - երդմնակալություն կոմպրոմիս - փոխզիջում ապելյացիա- բողոքարկում	ինվեստիցիա - ներդրում կոնտինգենտ - համակազմ քվոտա - մասնաբաժին ֆորմատ – ձևաչափ
<b>3</b>	1. համաձայնեցին, 2. կապվել, 3.հնացված, 4.հարմարեցնել	
<b>4</b>	1. վերլուծել են, 2. թռչող, 3. Մի՛ խաբվեք, 5.մոտենում էր	
<b>5</b>	1. որոշում է ընդունել, 2.փաստարկներին, 3.վրդովեց, 4.ձեռնարկումները,	
<b>6</b>	<p>Օմար Խայամը՝ Խորասանի վշտահար բանաստեղծը, նստած ոսկեղեն նարգիզների մեջ, գինի էր ըմպում ոսկյա գավաթից: Այդ միջոցին հանկարծ քամի բարձրացավ, որը, խելագար պտույտներ գործելով, հասավ Խայամին, վայր զցեց գինու գավը՝ ոսկեգույն հեղուկը թափելով գետնին: Զայրացավ Խայամը Աստծո դեմ: «Ինչպե՞ս է համարձակվում այս հողեղեն էակը բերան բացել իմ դեմ», - մտածեց Աստված և պատժեց Խայամին: Ծովեց բանաստեղծի՝ հուր խոսքեր ժայթքող բերանը, և կարկամեց լեզուն: Անցավ ժամանակ, ու գղջաց Խայամը: Արարիչը հասկացավ՝ մեղավոր չէր բանաստեղծը: Նա, ներելով բանաստեղծին, վերստին շնորհեց և՛ մեղրածոր գինի, և՛ իմաստուն խոսք՝ մոռանալով վիրավորանքը:</p>	
<b>7</b>	2	
<b>8</b>	3	
<b>9</b>	3	
<b>10</b>	3	
<b>11</b>	2	